ՀՏԴ 929:947.925 Ազիզբեկյան

Doi:10.54503/0135-0536-2024.3-269

ՌՈՒԲԵՆ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ռուբեն Ազիզբեկյանը թևակոխեց կյանքի յոթերորդ տասնամյակը: Պատմագիտության և դիվանագիտության խաչմերուկներով հոբելյարը, հիրավի, անցել է արգասաբեր և բովանդակալից կյանքի ուղի:

Ռ. Ազիզբեկյանը ծնվել է 1954 թ. հունիսի 16-ին Երևանում: 1971–1976 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Հատկանշական է, որ նրա ծնողների աշխատանքային ողջ գործունեությունը կապված է եղել Գիտությունների ակադեմիայի հետ: Հայրը՝ Լենդրուշ Ազիզբեկյանը, երկար տարիներ ԳԱ տպարանի տնօրենն էր, իսկ մայրը՝ Աստղիկ Ալանյանը, աշխատել է ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունում: Համալսարանն ավարտելուց հետո, հավատարիմ ընտանեկան ավանդույթին, Ռ. Ազիզբեկյանն աշխատանքի է անցել գիտության մայր կաճառում՝ որպես ԳԱ պատմության ինստիտուտի ավագ լաբորանտ: 1977–1979 թթ. գործուղվել է Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ ԽՍՀՄ պատմության ինստիտուտ, ինչի արդյունքն էր 1981 թ. «Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում» թեմայով պաշտպանած թեկնածուական թեզը:

1979–1985 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի զարգացած սոցիալիզմի պատմության բաժնում՝ որպես գիտաշխատող: 1984 թ. հրատարակվեց նրա առաջին մենագրությունը՝ «Рост культурно-технического уровня рабочего класса Советской Армении в условиях развитого социализма»: *Գրքում լուսաբանվել են 1960–1970-ական թվականներին ՀԽՍՀ բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճի հիմնական օրինաչափություններն ու զարգացման միտումները: Մասնավորապես արծարծված են նրա կրթական մակարդակի, մասնագիտական որակավորման բարձրացմանն ու հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարմանն առնչվող հար-*

---

* *Ներկայացվել է 22. VII. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

ցեր: Անդրադարձ է կատարված նաև Հանրապետությունում բանվորական կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրներին: Այս մենագրության համար Ռ. Ազիզբեկյանը 1984 թ. արժանացավ Հայաստանի կոմերիտմիության մրցանակի դափնեկրի կոչման:

Պատմության ինստիտուտում արժանիորեն գնահատվեց Ռ. Ազիզբեկյանի գիտակազմակերպչական ձիրքը, ինչի շնորհիվ 1985–1991 թթ. նրան վստահվեցին ինստիտուտի գիտական քարտուղարի, իսկ 1991–1994 թթ.՝ ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնները:

1992 թ. լույս տեսավ նրա «Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն» մենագրությունը, որը հայ պատմագիտության մեջ մեր ժողովրդի պատմության՝ 1985–1991 թթ. շրջադարձային էջերը՝ Արցախյան ազատագրական շարժման ծավալումը, դեպի ժողովրդավարություն, ազգային անկախ պետականության վերականգնում տանող դժվարին ու բարդ ուղին լուսաբանող առաջին հրապարակումներից էր:

Անկախացումից հետո, երբ արտաքին քաղաքականության գերատեսչությունը կայացման փուլում էր, 1994 թ. նա հրավիրվեց ԱԳ նախարարություն և գործուղվեց Մոսկվա՝ ՌԴ-ում ՀՀ դեսպանություն՝ նախ որպես խորհրդական, ապա՝ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար: Ռ. Ազիզբեկյանը հանրապետությունում առաջիններից էր, ում 1996 թ. շնորհվեց արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի բարձրագույն դիվանագիտական աստիճան:

1997–1999 թթ. նա եղել է ՀՀ ԱԳՆ ԱՊՀ վարչության պետ, 1999–2002 թթ. աշխատել է Ուկրաինայում ՀՀ դեսպանությունում՝ որպես արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, իսկ 2002–2006 թթ.՝ ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատում, նախ՝ որպես ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական, ապա՝ նախարարության քարտուղարության խորհրդական: 2006 թ. Ռ. Ազիզբեկյանը կրկին գործուղվեց Մոսկվա և մինչև 2010 թ. աշխատեց ՌԴ-ում ՀՀ դեսպանությունում՝ որպես արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

2010–2022 թթ. պատմաբան-դիվանագետն աշխատել է ԱԳՆ տարբեր վարչություններում՝ որպես խորհրդական: Այդ տարիներին նա համատեղությամբ աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնում, միաժամանակ դասախոսել է ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում: Ռ. Ազիզբեկյանը քանիցս եղել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահ:

Ավելի քան քառորդ դար ծառայելով դիվանագիտության ոլորտում՝ Ռ. Ազիզբեկյանն իր բազմամյա փորձն ու իմացությունն ի սպաս է դրել հայ-ռուսական և հայ-ուկրաինական կապերի ամրապնդման գործին:

Ավարտելով դիվանագիտական ծառայությունը՝ Ռ. Ազիզբեկյանը 2022 թ. հիմնական աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնում որպես ավագ գիտաշխատող՝ լիովին նվիրվելով գիտական աշխատանքներին:

Ներկայումս նա շարունակում է զբաղվել ՀՀ Երրորդ հանրապետության պատմության, մասնավորապես՝ հայ-ռուսական միջպետական հարաբերություններին առնչվող հարցերով: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում են նաև հետխորհրդային տարածաշրջանի հակամարտության գոտիներում տեղի ունեցող զարգացումները, ինչի արդյունքն են՝ «Մերձդնեստրյան

հակամարտությունը» (Երևան, 2016) և «Գագաուզյան հարցը. պատմություն և արդիականություն» (Երևան, 2018) նվիրված աշխատությունները:

Ռ. Ազիզբեկյանը հեղինակել է նաև «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի չորրորդ հատորի երկրորդ գրքի տասնչորսերորդ գլուխը, որն ընդգրկում է 1985–1991 թվականները՝ հայ ժողովրդի պատմության ծանր փորձություններով լի ժամանակաշրջանը: Վեր է հանված Արցախյան ազգային-ազատագրական պայքարի նոր փուլի ծավալման նշանակությունը հայ ժողովրդի համախմբման, միասնականության և սեփական բախտը կռելու վճռականության հարցում: Ընդգծված է վերջիններիս խիստ կարևորությունն ազգային անկախ պետականության վերականգնման գործում: Համակողմանիորեն ներկայացված է հայոց երկու անկախ պետությունների հռչակմանը նպատակաուղղված հայ ժողովրդի՝ մաքառումներով անցած բավականին փշոտ և բազում խոչընդոտներով լի դժվարին ճանապարհը:

Ընդհանուր առմամբ, Ռ. Ազիզբեկյանը հրատարակել է շուրջ 40 գիտական աշխատություն, այդ թվում՝ 4 մենագրություն: Համահեղինակ է մի շարք կոլեկտիվ մենագրությունների, հայոց պատմության դպրոցական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների:

Երկար տարիներ բախտ և պատիվ ունենալով գործընկեր լինելու Ռուբեն Ազիզբեկյանին՝ կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր կոլեկտիվում, ցանկացած պաշտոնում նա միշտ բարձր է պահել հայ մտավորականի վարկը, երբեք չի դավաճանել իր սկզբունքներին, իր ընկերասիրությամբ, բանիմացությամբ, հետազոտողի պրպտուն մտքով մեծ հարգանք է վայելել և վայելում ցանկացած շրջապատում: Անպայման ուզում ենք նշել նաև Ռուբեն Ազիզբեկյանի առաքինի ընտանիքին, որը սատար է կանգնում նրա բոլոր ծրագրերին:

Հոբելյարին մաղթում ենք երկար տարիների բեղմնավոր աշխատանք և քաջառողջություն:

ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության գլխավոր տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ XIX դարի վերջին քառորդի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանք, դյուղացիության պատմություն: Հեղինակ է 1 մենագրության և համահեղինակ է 3 գրքի ու ավելի քան 30 հրապարակումների: hovakimyan@sci.am